Գրանցված է Հայաստանի Հանրապետության
Կենտրոնական բանկում

«02» դեկտեմբերի 2008թ.

Նոր խմբագրությամբ գրանցված է
13.10.2011թ.
27.08.2012թ.

Նախագահ՝ Արթուր Ջավադյան

ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

ԲԱԺԻՆ Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Գլուխ 1. Հասկացություններ

1) Սույն կանոններում կիրառվող հասկացություններն ունեն սույն գլխով սահմանված նշանակությունները:
2) **«Տեղաբաշխման համակարգ».** էլեկտրոնային եղանակով բորսայական առևտրի կազմակերպման համար Բորսայում օգտագործվող առևտրային համակարգի և դրա մաս կազմող և արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման համար օգտագործվող ծրագրային մոդուլի ամբողջություն, որը նախատեսված է Բորսայում արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման, անցկացման և դրա հետ կապված տեղեկատվության մշակման և պահպանման, ինչպես նաև սույն կանոններով սահմանված այլ գործառույթների իրականացման համար:
3) **«Աճուրդ».** թողարկված արժեթղթերի տեղաբաշխման նպատակով կազմակերպվող մրցութային գործընթաց, որի ժամանակ արժեթուղթ ձեռք բերելու նպատակով հավանական գնորդները ներկայացնում են գնման հայտեր, որոնք տեղաբաշխման համակարգում գրանցվում, դասակարգվում, համադրվում են և կարող են բավարարվել համապատասխան հանդիպակաց հայտի (հայտերի) առկայության դեպքում:
4) **«Արժեթղթի հապավում».** տեղաբաշխմանը թույլատրված արժեթղթերի նույն դասը բնութագրող տարբերակիչ կոդանիշ:
5) **«Գործարքի կնքում».** տեղաբաշխման նստաշրջանի ընթացքում սույն կանոններով սահմանված կարգով արժեթղթերի առուվաճառքի էական պայմանների և արժեթղթերի առուվաճառքի արդյունքում ծագող իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ տեղաբաշխման համակարգի միջոցով տեղաբաշխման մասնակիցների միջև էլեկտրոնային եղանակով համաձայնության կայացում:
6) **«Իրավասու ստորաբաժանում».** արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման և տեղաբաշխման նստաշրջանների անցկացման գործառույթներն իրականացնող Բորսայի լիազորված ստորաբաժանում:
7) **«Մրցակցային հայտ».** գնման (վաճառքի) հայտ, որը կարող է մասնակիորեն կամ ամբողջությամբ բավարարվել հայտում նշված կամ դրանից ցածր (բարձր) գնով:
8) **«Ոչ մրցակցային հայտ».** գնման հայտ, որը կարող է մասնակիորեն կամ ամբողջությամբ բավարարվել վաճառքի լավագույն գնով, հակառակ դեպքում չի ընդգրկվում հայտերի հերթում:
9) **«Տեղաբաշխման օր».** աշխատանքային օր, որի ընթացքում Բորսայում կազմակերպվում է արժեթղթերի տեղաբաշխում:
10) **«Տեղաբաշխման նստաշրջան».** տեղաբաշխման օրվա ժամանակահատված, որի ընթացքում իրականացվում է արժեթղթերի տեղաբաշխում:
11) **«Տեղաբաշխման մասնակից».** Բորսայի անդամի կողմից տեղաբաշխմանը մասնակցելու համար լիազորված և համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող ֆիզիկական անձ, որը սույն կանոններով սահմանված կարգով Բորսայի անդամի անունից մասնակցում է արժեթղթերի տեղաբաշխմանը:
12) **«Տեղաբաշխող».** Բորսայի անդամ, որը տեղաբաշխման նպատակով թողարկողից արժեթղթեր է ձեռք բերում և/կամ տեղաբաշխման նպատակով թողարկողի արժեթղթերն է առաջարկում, վաճառում կամ մասնակցում է նման գործ իրականացնելու համաձայնությանը կամ պայմանագրին: Փակ աճուրդի ժամանակ որպես տեղաբաշխող կարող է հանդես գալ նաև Բորսայի անդամ չհանդիսացող ներդրումային ընկերությունը, բանկը կամ վարկային կազմակերպությունը, եթե տեղաբաշխում է իր կողմից թողարկված արժեթղթերը:
13) **«Կտրման գին».** Մրցակցային հայտերում նշված գներից տեղաբաշխողի կողմից ընտրվող գին, որից ավելի փոքր արժեք ունեցող գներով հայտերը չեն ընդգրկվում հայտերի բավարարման ցուցակում:

14) **«Կտրման եկամտաբերություն».** Մրցակցային հայտերում նշված տարեկան կամ արժեկտրոնային եկամտաբերություններից տեղաբաշխողի կողմից ընտրվող եկամտաբերություն, որից ավելի մեծ արժեք ունեցող եկամտաբերություններով հայտերը չեն ընդգրկվում հայտերի բավարարման ցուցակում:
15) Սույն կանոններում կիրառվող այլ հասկացություններն ունեն «Արժեթղթերի շուկայի մասինե ՀՀ օրենքով և Բորսայի կանոններով սահմանված նշանակությունները:

Գլուխ 2. Ընդհանուր դրույթներ

16) Տեղաբաշխման օրերը սահմանվում են Բորսայի գործադիր մարմնի ղեկավարի արժեթղթերի տեղաբաշխումը թույլատրելու մասին որոշմամբ՝ հիմք ընդունելով սույն կանոններով սահմանված թողարկողի կամ տեղաբաշխողի կողմից Բորսա ներկայացրած արժեթղթերի տեղաբաշխման դիմումը:
17) Տեղաբաշխման օրեր կարող են լինել բոլոր աշխատանքային օրերը:
18) Տեղաբաշխման նստաշրջաններն անցկացվում են տեղաբաշխման օրերին, ժամը 11:00-ից մինչև 15:00-ը: Ընդ որում, փակ և մեկ միասնական գնով բաց աճուրդների դեպքում գնման հայտերի ներկայացման ժամանակահատվածը սահմանվում է տվյալ տեղաբաշխման օրվա ժամը 11:00-ից մինչև 13:30-ը, իսկ կտրման գնի ընտրությունը, հաստատումը և աճուրդի անցկացումը պետք է ավարտված լինի մինչև 15:00-ը:
19) Տեղաբաշխման նստաշրջանի բացումն ու փակումը ազդարարվում է տեղաբաշխման համակարգի միջոցով տեղաբաշխման մասնակիցներին ուղարկվող համապատասխան հաղորդագրությամբ:
20) Տեղաբաշխմանը սույն կանոններով սահմանված կարգով ուղղակիորեն որպես գնորդ կարող են մասնակցել միայն Բորսայի անդամները, իսկ որպես վաճառող՝ տեղաբաշխողները:
21) Տեղաբաշխողը կարող է հանդես գալ՝
    ա) իր անունից և իր հաշվին, եթե տեղաբաշխում է իր կողմից թողարկված արժեթղթերը կամ տեղաբաշխման նպատակով թողարկողից ձեռք է բերել տեղաբաշխման ենթակա արժեթղթերը, կամ
    բ) իր անունից և թողարկողի հաշվին, եթե տեղաբաշխման նպատակով առաջարկում է իրեն սեփականության իրավունքով չպատկանող՝ թողարկողի տեղաբաշխման ենթակա արժեթղթերը:
22) Գնորդը կարող է հանդես գալ՝
    ա) իր անունից և իր հաշվին, կամ
    բ) իր անունից և հաճախորդի հաշվին:
23) Բորսայի անդամ չհանդիսացող ներդրումային ընկերության, բանկի կամ վարկային կազմակերպության դիմումի հիման վրա վերջիններիս Բորսայի գործադիր մարմնի ղեկավարի որոշմամբ կարող է տրամադրվել տեղաբաշխողի մեկանգամյա կարգավիճակ՝ իր կողմից թողարկված արժեթղթերը սույն կանոններին համապատասխան փակ աճուրդով տեղաբաշխելու նպատակով:
24) Սույն կանոնների 23) կետի համաձայն Բորսայի անդամ չհանդիսացող ներդրումային ընկերությունը, բանկը կամ վարկային կազմակերպությունը իր կողմից թողարկված արժեթղթերը սույն կանոններին համապատասխան փակ աճուրդով տեղաբաշխելու համար պետք է ստանան տեղաբաշխողի մեկանգամյա կարգավիճակ:
25) Տեղաբաշխողի մեկանգամյա կարգավիճակ ստանալու համար Բորսայի անդամ չհանդիսացող ներդրումային ընկերությունը, բանկը կամ վարկային կազմակերպությունը սույն կանոններով սահմանված արժեթղթերի տեղաբաշխման դիմումի և դրան կից ներկայացվող փաստաթղթերի հետ մեկտեղ պետք է Բորսա ներկայացնի՝
    ա) դիմում՝ սույն կանոնների Հավելված 2-ին համապատասխան՝ վավերացված թողարկողի կնիքով և թողարկողի գործադիր մարմնի ղեկավարի ստորագրությամբ,
    բ) թողարկողի պետական գրանցման կամ դրան համարժեք այլ վկայականի պատճենը,
    գ) թողարկողի կանոնադրության պատճենը,

դ) թողարկողի հարկային հաշվառման վերցնելու փաստաթղթի պատճենը (ՀՎՀՀ – Հարկ Վճարողի Հաշվառման Համարը),
ե) թողարկողի գործադիր մարմնի ընտրման կամ նշանակման մասին որոշման պատճենը (կոլեգիալ գործադիր մարմնի դեպքում՝ դրա անդամների և ղեկավարի ընտրումը կամ նշանակումը հավաստող փաստաթղթի պատճենը),
զ) թողարկողի լիցենզիայի պատճենները,
է) թողարկողի լիազորված ներկայացուցչի անձնագրի (անձնագրի բացակայության դեպքում՝ անձը հաստատող այլ փաստաթղթի) պատճենը,
ը) թողարկողի անունից տեղաբաշխմանը մասնակցելու համար լիազորված ներկայացուցչի ինքնության վերաբերյալ տեղեկություններ՝ համաձայն սույն կանոնների Հավելված 3-ի,
թ) թողարկողի կողմից լիազորված ներկայացուցչին տրված լիազորագիրը՝ համաձայն սույն կանոնների Հավելված 4-ի,
ժ) տեղաբաշխողի մեկանգամյա կարգավիճակի տրամադրման համար սահմանված միանվագ վաճառը հավաստող փաստաթուղթը:

26) Կարգավիճակի հայցման դիմումը ներկայացված է համարվում՝ Բորսայի կողմից այն ստանալու պահից: Դիմումում և դրան կից ներկայացման ենթակա փաստաթղթերում սույն գլխին համապատասխան ներառվելիք տեղեկությունները պետք է լինեն ստույգ՝ առանց որևէ էական փաստի խեղաթյուրման և/կամ բաց թողման:
27) Բորսայի գործադիր մարմնի ղեկավարը պարտավոր է դիմումը Բորսա ներկայացնելու պահից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում դիմումի բավարարման կամ մերժման մասին որոշում ընդունել:
28) Դիմումը կարող է մերժվել, եթե՝
ա) դիմումում պահանջվող տեղեկությունները և դրան կից ներկայացման ենթակա փաստաթղթերը ոչ լիարժեք են կամ դրանցում էական փաստ է խեղաթյուրվել կամ բաց թողնվել,
բ) առկա է Օրենքին կամ դրան համապատասխան ընդունված այլ որոշումներին (նորմատիվ իրավական ակտերին) և Բորսայի կանոններին որևէ անհամապատասխանություն կամ դրանցով սահմանված մերժման որևէ այլ հիմք,
գ) սույն կանոնների գլուխ 17-ով սահմանված՝ արժեթղթերի տեղաբաշխման դիմումը մերժվել է,
դ) չի վճարվել տեղաբաշխողի մեկանգամյա կարգավիճակի տրամադրման համար սահմանված միանվագ վաճառը:
29) Դիմումի մերժման մասին Բորսայի գործադիր մարմնի ղեկավարի որոշումը պետք է ներառի մերժման հիմքերը: Ընդ որում, սույն գլխով սահմանված դիմումի մերժումը հիմք է հանդիսանում սույն կանոններով սահմանված արժեթղթերի տեղաբաշխման թույլտվության համար Բորսայի անդամ չհանդիսացող ներդրումային ընկերության, բանկի կամ վարկային կազմակերպության կողմից ներկայացված դիմումի մերժման համար:
30) Դիմումի մերժման մասին Բորսայի գործադիր մարմնի ղեկավարի որոշման ընդունման դեպքում՝ թողարկողի կողմից վճարված տեղաբաշխողի մեկանգամյա կարգավիճակի տրամադրման համար սահմանված միանվագ վաճառը ենթակա է հետ վերադարձման որոշման ընդունման օրվանից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում:
31) Թողարկողին տեղաբաշխողի մեկանգամյա կարգավիճակ շնորհելու մասին որոշումն ընդունում է Բորսայի գործադիր մարմնի ղեկավարը, եթե ներկայացված փաստաթղթերը և տեղեկությունները համապատասխանում են Օրենքին, այլ իրավական ակտերին, Բորսայի կանոններին, և առկա չեն դիմումը մերժելու համար սույն կանոններով սահմանված հիմքերը:
32) Դիմումի բավարարման կամ մերժման մասին որոշման ընդունման դեպքում Բորսայի գործադիր մարմնի ղեկավարը պարտավոր է այդ մասին տեղեկացնել թողարկողին, ինչպես նաև առնվազն Բորսայի առևտրային համակարգի միջոցով՝ էլեկտրոնային եղանակով, այդ մասին տեղեկացնել Բորսայի անդամներին:
33) Սույն կանոնների 31) կետին համապատասխան Բորսայի անդամ չհանդիսացող ներդրումային ընկերությանը, բանկին կամ վարկային կազմակերպությանը տեղաբաշխողի կարգավիճակ

շնորհելու դեպքում տվյալ տեղաբաշխողի համար առևտրային համակարգում ավելացվում է մեկանգամյա օգտագործման կայան՝ համապատասխան իրավունքներով, իսկ տեղաբաշխողի լիազորված ներկայացուցչին տրամադրվում է ծածկագիր և գաղտնաբառ: Ընդ որում, եթե փակ և մեկ միասնական գնով բաց աճուրդի ժամանակ որպես տեղաբաշխող հանդես է գալիս Բորսայի անդամը, ապա վերջինիս համար նույնպես առևտրային համակարգում ավելացվում է մեկանգամյա օգտագործման կայան՝ համապատասխան իրավունքներով, իսկ Բորսայի տվյալ անդամի լիազորված ներկայացուցչին տրամադրվում է ծածկագիր և գաղտնաբառ:

34) Տեղաբաշխման ավարտից հետո՝ մինչև հաջորդ աշխատանքային օրը, Բորսայի անդամ չհանդիսացող ներդրումային ընկերությանը, բանկին կամ վարկային կազմակերպությանը շնորհված մեկանգամյա տեղաբաշխողի կարգավիճակը ավտոմատ դադարեցված է համարվում:

35) Տեղաբաշխման ավարտից հետո՝ մինչև հաջորդ առևտրային նստաշրջանի բացումը, առևտրային համակարգից հեռացվում է սույն կանոնների 33) կետում նշված կայանը՝ համապատասխան ծածկագրով և գաղտնաբառով:

Գլուխ 3. Տեղաբաշխման եղանակը

29) Տեղաբաշխումն իրականացվում է աճուրդների կազմակերպման միջոցով՝ դրանց համար նախատեսված արժեթղթերի և դրամական միջոցների նախնական դեպոնացմամբ:

30) Տեղաբաշխման ընթացքում որպես գնորդ հանդես եկող տեղաբաշխման ցանկացած մասնակից գործարքներ կարող է կնքել նախապես դեպոնացված դրամական միջոցների սահմաններում:

31) Տեղաբաշխման ընթացքում տեղաբաշխողը գործարքներ կարող է կնքել նախապես դեպոնացված արժեթղթերի սահմաններում:

32) Որպես գնորդ հանդես եկող տեղաբաշխման մասնակցի կողմից տեղաբաշխման համակարգ մուտքագրված գնման հայտի բավարարման (գործարքի կնքման) դեպքում գնված արժեթղթերի քանակի չափով ավելացվում է գործարքի արդյունքում գնված՝ տվյալ դասի արժեթղթերի մնացորդը և գործարքի գումարի չափով նվազեցվում է դրամական միջոցների մնացորդը:

33) Բաց ստանդարտ աճուրդի ընթացքում տեղաբաշխողի կողմից տեղաբաշխման համակարգ մուտքագրված վաճառքի հայտի բավարարման (գործարքի կնքման), իսկ փակ և մեկ միասնական գնով բաց աճուրդների ընթացքում կտրման գնի հաստատման և աճուրդի իրականացման դեպքում վաճառված արժեթղթերի քանակի չափով նվազեցվում է գործարքի արդյունքում վաճառված արժեթղթերի մնացորդը և գործարքի գումարի չափով ավելացվում է դրամական միջոցների մնացորդը:

34) Տեղաբաշխման նստաշրջանի ընթացքում որպես գնորդ հանդես եկող տեղաբաշխման մասնակիցները կարող են կատարել դրամական միջոցների լրացուցիչ դեպոնացումներ և ապադեպոնացումներ: Բաց ստանդար աճուրդի ընթացքում տեղաբաշխողը կարող է կատարել դրամական միջոցների ապադեպոնացում: Փակ աճուրդի դեպքում տեղաբաշխողը կարող է կատարել դրամական միջոցների ապադեպոնացում միայն աճուրդի ավարտից հետո, եթե նման հնարավորություն նախատեսված է սույն կանոնների 35) կետում:

35) Սույն կանոնների 34) կետի համաձայն դրամական միջոցների լրացուցիչ դեպոնացումները և/կամ ապադեպոնացումներն իրականացվում են Բորսայի «Կորպորատիվ արժեթղթերի առևտրի կանոններով և Դեպոզիտարիայի «Արժեթղթերի հաշվարկային համակարգի կանոնակարգով սահմանված ընթացակարգերին համապատասխան:

Գլուխ 4. Աճուրդների եղանակները և ձևերը

36) Արժեթղթերի տեղաբաշխման նպատակով կազմակերպվող աճուրդը կարող է իրականացվել բաց կամ փակ եղանակով, որի ընթացքում Բորսայի անդամները, բացառությամբ տեղաբաշխողներից, կարող են հանդես գալ միայն որպես գնորդներ:

37) Բաց աճուրդը կարող է իրականացվել հետևյալ ձևերով՝

ա) բաց ստանդարտ աճուրդ,

բ) մեկ միասնական գնով բաց աճուրդ՝ հաշվի առնելով գնման հայտերի գները,

գ) մեկ միասնական գնով բաց աճուրդ՝ հաշվի չառնելով գնման հայտերի գները:

38) Փակ աճուրդը կարող է իրականացվել հետևյալ ձևերով՝
ա) փակ ստանդարտ աճուրդ,
բ) խառը փակ աճուրդ,
գ) միջին կշռված գնով փակ աճուրդ,
դ) մեկ միասնական գնով փակ աճուրդ՝ հաշվի առնելով գնման հայտերի գները,
ե) մեկ միասնական գնով փակ աճուրդ՝ հաշվի չառնելով գնման հայտերի գները,
զ) եկամտաբերությամբ փակ աճուրդ:

39) Բաց ստանդարտ աճուրդի ընթացքում տեղաբաշխումը կարող է իրականացվել մեկից ավելի տեղաբաշխողների կողմից:

40) Փակ և մեկ միասնական գնով բաց աճուրդների ընթացքում տեղաբաշխումն իրականացվում է միայն մեկ տեղաբաշխողի կողմից:

41) Աճուրդի եղանակն ու ձևն ընտրում է թողարկողը կամ նրա կողմից լիազորված տեղաբաշխողը:

ԲԱԺԻՆ II. ԲԱՑ ԱՃՈՒՐԴ

Գլուխ 5. Բաց աճուրդի ընդհանուր պայմանները

42) Բաց աճուրդի ընթացքում որպես գնորդ հանդես եկող տեղաբաշխման մասնակիցը չի կարող վաճառել տեղաբաշխման արդյունքում ձեռք բերված արժեթուղթը:

43) Որպես գնորդ հանդես եկող տեղաբաշխման մասնակիցները, որոնք ցանկություն ունեն իրենց կամ իրենց հաճախորդների հաշվին գնել տեղաբաշվող արժեթղթերը, կարող են տեղաբաշխման համակարգ ներկայացնել միայն գնման մրցակցային հայտեր:

Գլուխ 6. Բաց ստանդարտ աճուրդի հատուկ պայմանները

44) Բաց ստանդարտ աճուրդով տեղաբաշխումը կարող է իրականացվել երկու ձևով՝
ա) անվանական բաց ստանդարտ աճուրդ,
բ) սովորական բաց ստանդարտ աճուրդ:

45) Անվանական բաց ստանդարտ աճուրդի ընթացքում որպես գնորդ հանդես եկող տեղաբաշխման մասնակցի կողմից տեղաբաշխման համակարգ ներկայացված գնման հայտի էական պայմանների հետ միասին բացահայտվում է նաև այն ներկայացնողի առևտրային կոդը, իսկ սովորական բաց ստանդարտ աճուրդի դեպքում առևտրային կոդը չի բացահայտվում:

46) Բաց ստանդարտ աճուրդում տեղաբաշխողը տեղաբաշխման նստաշրջանի ընթացքում տեղաբաշխման համակարգի միջոցով հայտարարում է տեղաբաշխման այլ մասնակիցներին արժեթղթի այն գինը, որով պատրաստ է վաճառել տեղաբաշխվող արժեթղթերը: Տեղաբաշխման մասնակիցներն իրենց հերթին տեղաբաշխման համակարգ հայտեր են ներկայացնում այն գնով, որով պատրաստ են գնել առաջարկվող արժեթղթերը:

47) Բաց ստանդարտ աճուրդ ընթացքում տեղաբաշխման համակարգում կնքվող գործարքների գինը ձևավորվում է երկկողմանի անընդհատ աճուրդի ընթացքում:

48) Բաց ստանդարտ աճուրդի ընթացքում առաջնահերթ կարգով բավարարվում են առավելագույն գին ունեցող հայտերը, իսկ միևնույն գին ունեցող հայտերը բավարավում են ըստ դրանց տեղաբաշխման համակարգ մուտքագրման ժամանակային առաջնահերթության:

49) Բաց ստանդարտ աճուրդի ընթացքում տեղաբաշխման մասնակիցների կողմից տեղաբաշխման համակարգ ներկայացված ցանկացած հայտի պայմանները համեմատվում են հանդիպակաց հայտերի Հերթում առկա հայտերի պայմանների հետ: Հանդիպակաց հայտերի Հերթում համապատասխան հանդիպակաց հայտի (հայտերի) առկայության դեպքում տեղաբաշխման համակարգում գրանցվում է գործարքի (գործարքների) կնքում:

50) Եթե ներկայացված հայտը համապատասխան հանդիպակաց բոլոր հայտերով բավարարվելուց (գործարքների կնքումից) հետո այնուամենայնիվ բավարարվում է մասամբ, ապա մնացորդը

(հայտի չբավարարված մասը) ընդգրկվում է Հերթում սույն կանոնների 103) կետում նշված կարգով:

51) Հերթում համապատասխան հանդիպակաց հայտերի բացակայության դեպքում ներկայացված գնման հայտն ընդգրկվում է Հերթում սույն կանոնների 103) կետում նշված կարգով:

Գլուխ 7. Մեկ միասնական գնով բաց աճուրդի (հաշվի առնելով գնման հայտերի գները) հատուկ պայմանները

52) Մեկ միասնական գնով բաց (հաշվի առնելով գնման հայտերի գները) աճուրդի վրա, բացի բաց աճուրդի ընդհանուր պայմաններից տարածվում են նաև փակ աճուրդի ընդհանուր պայմանները՝ հետևյալ բացառություններով՝
   ա) չի կարող ներկայացվել գնման ոչ մրցակցային հայտ,
   բ) չի կարող ներկայացվել լրիվ բավարարմամբ հայտ:

53) Մեկ միասնական գնով բաց (հաշվի առնելով գնման հայտերի գները) աճուրդի ընթացքում գործարք կնքելու համար ընտրվում և բավարարվում են մրցակցային այն հայտերը, որոնց գինը գերազանցում է կտրման գինը՝ ըստ առավելագույն գին ունեցող հայտերի: Միևնույն գին ունեցող հայտերն ընտրվում և բավարարվում են ըստ դրանց տեղաբաշխման համակարգ մուտքագրման ժամանակային առաջնահերթության:

54) Բոլոր ընտրված և բավարարման ենթակա մրցակցային հայտերը բավարարվում են կտրման գնով:

Գլուխ 8. Մեկ միասնական գնով բաց աճուրդի (հաշվի չառնելով գնման հայտերի գները) հատուկ պայմանները

55) Մեկ միասնական գնով բաց (հաշվի չառնելով գնման հայտերի գները) աճուրդի վրա, բացի բաց աճուրդի ընդհանուր պայմաններից տարածվում են նաև փակ աճուրդի ընդհանուր պայմանները՝ հետևյալ բացառություններով՝
   ա) չի կարող ներկայացվել գնման ոչ մրցակցային հայտ,
   բ) չի կարող ներկայացվել լրիվ բավարարմամբ հայտ:

56) Մեկ միասնական գնով բաց (հաշվի չառնելով գնման հայտերի գները) աճուրդի ընթացքում գործարք կնքելու համար ընտրվում և բավարարվում են մրցակցային այն հայտերը, որոնց գինը գերազանցում է վաճառքի հայտում նշված գինը (կտրման գինը):

57) Բոլոր ընտրված և բավարարման ենթակա մրցակցային հայտերը բավարարվում են կտրման գնով՝ ըստ դրանց տեղաբաշխման համակարգ մուտքագրման ժամանակային առաջնահերթության:

ԲԱԺԻՆ III. ՓԱԿ ԱՃՈՒՐԴ

Գլուխ 9. Փակ աճուրդի ընդհանուր պայմանները

58) Փակ աճուրդը կազմակերպվում է երեք փուլով՝
   ա) որպես գնորդ հանդես եկող տեղաբաշխման ցանկացած մասնակցի կողմից արժեթղթեր ձեռք բերելու նպատակով գնման մրցակցային և ոչ մրցակցային հայտերի ներկայացում տեղաբաշխման համակարգ (մինչև աճուրդի սկսվելը),
   բ) որպես գնորդ հանդես եկող տեղաբաշխման ցանկացած մասնակցի կողմից արժեթղթեր ձեռք բերելու նպատակով տեղաբաշխման համակարգ գնման մրցակցային և ոչ մրցակցային հայտերի ներկայացման գործընթացի դադարեցում,
   գ) տեղաբաշխողի կողմից կտրման գնի ընտրություն, հաստատում և աճուրդի անցկացում, որի ընթացքում տեղի է ունենում արժեթղթերով առուվաճառքի գործարքների կնքման գործընթացը:

59) Արժեթղթերի կտրման գնի ընտրությունը, հաստատումը և աճուրդի անցկացումը իրականացվում է տվյալ տեղաբաշխողի լիազորված ներկայացուցչի կողմից այդ նպատակով տեղաբաշխողին Բորսայի կողմից իր տարածքում տրամադրված մեկանգամյա օգտագործման կայանի միջոցով:
60) Փակ աճուրդի ձևերը տարբերվում են գործարքների կնքման կարգով, ինչպես նաև գործարքների գնի որոշման եղանակով:
61) Փակ աճուրդի որևէ ձևի ընտրության դեպքում թողարկողը կամ նրա կողմից լիազորված տեղաբաշխողը հնարավորություն ունեն ընտրելու նաև ոչ մրցակցային հայտերի և/կամ լրիվ բավարարմամբ հայտերի բացառման պայմանները: Եթե թողարկողը կամ նրա կողմից լիազորված տեղաբաշխողը սույն կանոնների համաձայն Բորսա ներկայացրած արժեթղթերի տեղաբաշխման իր դիմումում նշել է ոչ մրցակցային հայտերի և/կամ լրիվ բավարարմամբ հայտերի բացառման պայմաններից որևէ մեկը կամ երկու պայմաններն էլ միասին, ապա փակ աճուրդի տվյալ ձևի անցկացման ժամանակ որպես գնորդ հանդես եկող տեղաբաշխման մասնակիցները չեն կարող նշված բացառման պայմաններով հայտեր մուտքագրել տեղաբաշխման համակարգ:
62) Փակ աճուրդների անցկացման ընթացքում արժեթղթերի գնման հայտերը բավարարվում են հետևյալ հաջորդականությամբ՝
    ա) բոլոր մրցակցային հայտերը, որոնց գինը մեծ է կամ հավասար կտրման գնին (եկամտաբերությամբ աճուրդի համար՝ փոքր է կամ հավասար կտրման եկամտաբերությանը),
    բ) ոչ մրցակցային հայտերը:
63) Եթե ոչ մրցակցային հայտերի մի մասն է ենթակա բավարարման, ապա հայտերի այդ մասի ընտրությունը և բավարարումը կատարվում է ըստ դրանց տեղաբաշխման համակարգ մուտքագրման ժամանակային առաջնահերթության:

Գլուխ 10. Ստանդարտ փակ (եվրոպական) աճուրդի հատուկ պայմանները

64) Ստանդարտ փակ աճուրդի ընացքում ներկայացված գնման հայտերը բավարարվում են հետևյալ հաջորդականությամբ՝
    ա) բավարարման ենթակա բոլոր մրցակցային հայտերը,
    բ) ոչ մրցակցային հայտերը՝ ըստ դրանց տեղաբաշխման համակարգ ներկայացվելու ժամանակային առաջնահերթության:
65) Գնման մրցակցային հայտով գործարքները կնքվում են այն գներով, որոնք նշված են գնման հայտերում՝ ըստ գների նվազման հաջորդականության: Միևնույն գին ունեցող հայտերը բավարարվում են ըստ դրանց տեղաբաշխման համակարգ մուտքագրման ժամանակային առաջնահերթության:
66) Գնման ոչ մրցակցային հայտով գործարքը կնքվում է կտրման գնով, բացառությամբ սույն կանոնների 67) կետով նախատեսված դեպքի:
67) Եթե ոչ մրցակցային հայտերում նշված արժեթղթերի քանակի և առավելագույն գին ունեցող մրցակցային հայտերում նշված արժեթղթերի քանակի հանրագումարը գերազանցում է տեղաբաշխվող արժեթղթերի ընդհանուր քանակը, ապա նախ բավարարվում են առավելագույն գին ունեցող մրցակցային հայտերը, այնուհետև՝ ոչ մրցակցային հայտերը՝ առավելագույն գին ունեցող մրցակցային հայտերի գնով:

Գլուխ 11. Միջին կշռված գնով փակ (ամերիկյան) աճուրդի հատուկ պայմանները

68) Միջին կշռված գնով փակ աճուրդի ընթացքում մրցակցային հայտը ներառում է իր մեջ հատուկ պայման, որը նախատեսում է լրացուցիչ պարտադիր չափորոշիչ՝ դրամական միջոցների առավելագույն գումարի չափ, որի սահմաններում հնարավոր է ձեռք բերել արժեթղթեր և, որը չի կարող փոքր լինել ներկայացված արժեթղթերի քանակի և միավոր գնի արտադրյալից:
69) Գործարքների կնքման համար ընտրվում և բավարարվում են գնման մրցակցային այն հայտերը, որոնց գինը մեծ է կամ հավասար կտրման գնին: Բոլոր ընտրված և բավարարման ենթակա մրցակցային հայտերը բավարարվում են միջին կշռված գնով:

70) Միջին կշռված գինը հավասար է ընտրված և բավարարման ենթակա բոլոր մրցակցային հայտերի ընդհանուր գումարի և այդ հայտերում նշված արժեթղթերի ընդհանուր քանակի հարաբերությանը: Ընդ որում, մրցակցային հայտերի մի մասը կարող է բավարարվել հայտում նշված գնից բարձր գնով, իսկ բավարարման ենթակա մրցակցային հայտերի այն մասը, որոնց դրամական միջոցների առավելագույն գումարի չափը, թույլ չի տալիս հայտերը բավարարել միջին կշռված գնով, չեն բավարարվում:

71) Բոլոր բավարարման ենթակա գնման ոչ մրցակցային հայտերը բավարարվում են միևնույն միջին կշռված գնով: Առաջին հերթին բավարարվում են առավելագույն գնով բավարարման ենթակա գնման մրցակցային հայտերը, իսկ միևնույն գին ունեցող գնման հայտերը բավարարվում են՝ ըստ դրանց տեղաբաշխման համակարգ ներկայացվելու ժամանակային առաջնահերթության, այնուհետ գնման ոչ մրցակցային հայտերը՝ ըստ դրանց տեղաբաշխման համակարգ մուտքագրման ժամանակային առաջնահերթության, բացառությամբ սույն կանոնների 72) կետի բ) ենթակետով սահմանված դեպքի:

72) Եթե տեղաբաշխման ենթակա արժեթղթերի քանակը $(Ք_{\text{վաճ}})$ փոքր է ներկայցված մրցակցային $(Ք_{\text{մրցակ}})$ և ոչ մրցակցային $(Ք_{\text{ոչ մրցակ}})$ հայտերում նշված արժեթղթերի քանակների հանրագումարից $Ք_{\text{վաճ}} < (Ք_{\text{մրցակ}} + Ք_{\text{ոչ մրցակ}})$, ապա բավարարման ենթակա մրցակցային և ոչ մրցակցային հայտերում նշված արժեթղթերի քանակը որոշվում է հետևյալ ձևով՝

ա) եթե՝ $Ք_{\text{վաճ}} > Ք_{\text{ոչ մրցակ}}$, ապա կբավարարվեն բավարարման ենթակա բոլոր մրցակցային հայտերը և $(Ք_{\text{վաճ}} - Ք_{\text{մրցակ}})$ ոչ մրցակցային հայտերը: Բոլոր գործարքների գինը հավասար կլինի հենց այդ $(Ք_{\text{վաճ}} - Ք_{\text{ոչ մրցակ}})$ մրցակցային հայտերի միջին կշռված գնին:

բ) եթե՝ $Ք_{\text{վաճ}} < Ք_{\text{ոչ մրցակ}}$, ապա կբավարարվեն առավելագույն գին ունեցող բոլոր մրցակցային հայտերը (դրանց քանակը հավասար է $Ա_{\text{մրցակ}}$) և $(Ք_{\text{վաճ}} - Ա_{\text{մրցակ}})$ ոչ մրցակցային հայտերը, որոնք տեղաբաշխման համակարգում դասակարգվում են՝ ըստ դրանց տեղաբաշխման համակարգ մուտքագրման ժամանակային առաջնահերթության: Ոչ մրցակցային հայտերով գործարքի գինը հավասար է առավելագույն գին ունեցող մրցակցային հայտերի գնին:

Գլուխ 12. Խառը փակ աճուրդի հատուկ պայմանները

73) Խառը փակ աճուրդի ընթացքում գնման մրցակցային հայտերը բավարարվում են նույն հայտերում նշված գնով՝ ըստ գնային առաջնահերթության, իսկ գների հավասարության դեպքում հայտերը բավարարվում են ըստ դրանց տեղաբաշխման համակարգ մուտքագրման ժամանակային առաջնահերթության:

74) Գնման ոչ մրցակցային հայտերն ընտրվում և բավարարվում են բավարարման ենթակա մրցակցային հայտերի միջին կշռված գնով՝ ըստ դրանց տեղաբաշխման համակարգ մուտքագրման ժամանակային առաջնահերթության, բացառությամբ սույն կանոնների 76) կետի բ) ենթակետով սահմանված դեպքի:

75) Միջին կշռված գինը հավասար է բավարարված մրցակցային հայտերի ընդհանուր գումարի և այդ հայտերում նշված արժեթղթերի ընդհանուր քանակի հարաբերությանը:

76) Եթե տեղաբաշխման ենթակա արժեղթերի քանակը $(Ք_{\text{վաճ}})$ փոքր է ներկայցված մրցակցային $(Ք_{\text{մրցակ}})$ և ոչ մրցակցային $(Ք_{\text{ոչ մրցակ}})$ հայտերում նշված արժեթղթերի քանակների հանրագումարից $Ք_{\text{վաճ}} < (Ք_{\text{մրցակ}} + Ք_{\text{ոչ մրցակ}})$, ապա բավարարման ենթակա մրցակցային և ոչ մրցակցային հայտերում նշված արժեթղթերի քանակը որոշվում է հետևյալ ձևով՝

ա) եթե՝ $Ք_{\text{վաճ}} > Ք_{\text{ոչ մրցակ}}$, ապա կբավարարվեն բավարարման ենթակա բոլոր մրցակցային հայտերը և $(Ք_{\text{վաճ}} - Ք_{\text{մրցակ}})$ ոչ մրցակցային հայտերը: Ոչ մրցակցային հայտերով գործարքների գինը հավասար կլինի հենց այդ $(Ք_{\text{վաճ}} - Ք_{\text{ոչ մրցակ}})$ մրցակցային հայտերի միջին կշռված գնին:

բ) եթե՝ $Ք_{ՎԱՃ} < Ք_{ոչ\ մրցակ}$, ապա կբավարարվեն առավելագույն գին ունեցող բոլոր մրցակցային հայտերը (դրանց քանակը հավասար է $Ա_{մրցակ}$) և $(Ք_{ՎԱՃ} - Ա_{մրցակ})$ ոչ մրցակցային հայտերը, որոնք տեղաբաշխման համակարգում դասակարգվում են ըստ դրանց տեղաբաշխման համակարգ մուտքագրման ժամանակային առաջնահերթության: Ոչ մրցակցային հայտերով գործարքի գինը հավասար է առավելագույն գին ունեցող մրցակցային հայտերի գնին:

Գլուխ 13. Մեկ միասնական գնով փակ (հաշվի առնելով գնման հայտերի գները) աճուրդի հատուկ պայմանները

77) Մեկ միասնական գնով փակ աճուրդի (հաշվի առնելով գնման հայտերի գները) ընթացքում գործարք կնքելու համար ընտրվում և բավարարվում են գնման մրցակցային այն հայտերը, որոնց գինը գերազանցում է կտրման գինը: Բավարարման ենթակա բոլոր ընտրված մրցակցային հայտերը բավարարվում են կտրման գնով՝ ըստ գնային առաջնահերթության, իսկ գների հավասարության դեպքում հայտերը բավարարվում են ըստ դրանց տեղաբաշխման համակարգ մուտքագրման ժամանակային առաջնահերթության:
78) Բավարարման ենթակա բոլոր գնման ոչ մրցակցային հայտերը բավարարվում են նույն կտրման գնով՝ ըստ դրանց տեղաբաշխման համակարգ մուտքագրման ժամանակային առաջնահերթության:

Գլուխ 14. Մեկ միասնական գնով փակ (հաշվի չառնելով գնման հայտերի գները) աճուրդի հատուկ պայմանները

79) Մեկ միասնական գնով փակ (հաշվի չառնելով գնման հայտերի գները) աճուրդի ընթացքում գործարք կնքելու համար ընտրվում և բավարարվում են այն գնման մրցակցային հայտերը, որոնց գինը գերազանցում է կտրման գինը: Բավարարման ենթակա բոլոր ընտրված մրցակցային հայտերը բավարարվում են կտրման գնով: Բավարարման ենթակա բոլոր գնման ոչ մրցակցային հայտերը բավարարվում են նույն կտրման գնով:
80) Բավարարման ենթակա գնման մրցակցային և ոչ մրցակցային հայտերը բավարարվում են՝ ըստ դրանց տեղաբաշխման համակարգ մուտքագրման ժամանակային առաջնահերթության:

Գլուխ 15. Եկամտաբերությամբ փակ աճուրդի հատուկ պայմանները

81) Եկամտաբերությամբ փակ աճուրդը կազմակերպվում է պարտատոմսերի տեղաբաշխման ժամանակ: Եկամտաբերությամբ փակ աճուրդի ժամանակ գնման մրցակցային հայտերում նշվում է պարտատոմսի տարեկան եկամտաբերությունը կամ արժեկտրոնային եկամտաբերությունը, որը սահմանվում է թողարկողի որոշմամբ: Պարտատոմսերի տեղաբաշխման ընթացքում գործարք կնքելու համար ընտրվում և բավարարվում են գնման մրցակցային այն հայտերը, որոնցում նշված տարեկան կամ արժեկտրոնային եկամտաբերությունը փոքր է կամ հավասար տարեկան կամ արժեկտրոնային կտրման եկամտաբերությունից:
82) Արժեկտրոնային եկամտաբերությամբ կազմակերպվող փակ աճուրդի ընթացքում բոլոր ընտրված և բավարարման ենթակա մրցակցային հայտերը բավարարվում են պարտատոմսի անվանական արժեքով՝ ըստ արժեկտրոնային եկամտաբերության նվազման, իսկ արժեկտրոնային եկամտաբերության հավասարության դեպքում հայտերը բավարարվում են ըստ տեղաբաշխման համակարգ դրանց մուտքագրման ժամանակային առաջնահերթության:
83) Տարեկան եկամտաբերությամբ կազմակերպվող փակ աճուրդի ընթացքում բոլոր ընտրված և բավարարման ենթակա մրցակցային հայտերը բավարարվում են պարտատոմսի անվանական արժեքով՝ ըստ տարեկան եկամտաբերության նվազման, իսկ եկամտաբերության հավասարության դեպքում հայտերը բավարարվում են ըստ տեղաբաշխման համակարգ դրանց մուտքագրման ժամանակային առաջնահերթության:

84) Բավարարման ենթակա բոլոր ոչ մրցակցային հայտերը բավարարվում են պարտատոմսի անվանական արժեքով՝ ըստ դրանց տեղաբաշխման համակարգ մուտքագրման ժամանակային առաջնահերթության:

ԲԱԺԻՆ IV. ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԿԱՐԳԸ

Գլուխ 16. Տեղաբաշխմանը թույլատրման ենթակա արժեթղթերը

85) Տեղաբաշխման առարկա կարող են հանդիսանալ այն արժեթղթերը, որոնց ազդագիրը «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով գրանցվել է Կենտրոնական բանկում:
86) Սույն կանոնների 85) կետով սահմանված պահանջը չի տարածվում «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված արժեթղթերի վրա:

Գլուխ 17. Տեղաբաշխմանը արժեթղթերի թույլատրման կարգը

87) Սույն գլխի դրույթները չեն տարածվում Հայաստանի Հանրապետության կամ Կենտրոնական բանկի կողմից թողարկված արժեթղթերի վրա, որոնց տեղաբաշխման թույլատրման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Բորսայի հե կնքվող պայմանագրով:
88) Թողարկողը կամ տեղաբաշխողն արժեթղթերի տեղաբաշխում կազմակերպելու համար պետք է Բորսա ներկայացնի՝
    ա) դիմում՝ սույն կանոնների ե վելված 1-ին համապատասխան՝ վավերացված թողարկողի կամ տեղաբաշխողի կնիքով և լիազորված ներկայացուցչի ստորագրությամբ,
    բ) Կենտրոնական բանկում գրանցված ազդագրի պատճենը և Կենտրոնական բանկի՝ ազդագիրը գրանցելու մասին որոշման պատճենը, բացառությամբ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված արժեթղթերի,
    գ) արժեթղթերի թողարկման մասին որոշման պատճենը՝ վավերացված թողարկողի լիազորված ներկայացուցչի ստորագրությամբ և կնքված թողարկողի կնիքով,
    դ) տեղեկանք առ այն, որ դիմումի ներկայացման պահին տեղաբաշխման ենթակա արժեթղթերի թողարկման հաշիվը վարվում է օրենքով նախատեսված մարմնի կողմից,
    ե) թողարկողի և տեղաբաշխողի միջև կնքված պայմանագրի պատճենը, եթե թողարկողն ինքը չի իրականացնում արժեթղթերի տեղաբաշխումըե զ) այլ փաստաթղթեր՝ թողարկողի կամ տեղաբաշխողի հայեցողությամբ:
89) Ներդրողների շահերի պաշտպանության անհրաժեշտությունից ելնելով՝ Բորսան կարող է լրացուցիչ փաստաթղթեր կամ տեղեկատվություն պահանջել թողարկողից և տեղաբաշխողից:
90) Դիմումը ներկայացված է համարվում՝ Բորսայի կողմից այն ստանալու պահից: Դիմումում և դրան կից ներկայացման ենթակա փաստաթղթերում սույն գլխին համապատասխան ներառվելիք տեղեկությունները պետք է լինեն ստույգ՝ առանց որևէ էական փաստի խեղաթյուրման և/կամ բաց թողման:
91) Բորսայի գործադիր մարմնի ղեկավարը պարտավոր է դիմումը Բորսա ներկայացնելու պահից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում դիմումի բավարարման կամ մերժման մասին որոշում ընդունել:
92) Դիմումի մերժման հիմք կարող է հանդիսանալ՝
    ա) դիմումում պահանջվող տեղեկությունները և դրան կից ներկայացման ենթակա փաստաթղթերը ոչ լիարժեք են կամ դրանցում էական փաստ է խեղաթյուրվել կամ բաց թողնվել,
    բ) առկա է Օրենքին կամ դրան համապատասխան ընդունված այլ որոշումներին (նորմատիվ իրավական ակտերին) և Բորսայի կանոններին որևէ անհամապատասխանություն կամ դրանցով և սույն կանոններով սահմանված մերժման որևէ այլ հիմք:

93) Դիմումի մերժման մասին Բորսայի գործադիր մարմնի ղեկավարի որոշումը պետք է ներառի սույն կանոնների 92) կետի ա) և/կամ բ) ենթակետերով սահմանված մերժման հիմքերը: Ընդ որում, սույն գլխով սահմանված արեթղթերի տեղաբաշխման թույլտվության դիմումի մերժումը հիմք է հանդիսանում սույն կանոններով սահմանված տեղաբաշխողի մեկանգամյա կարգավիճակ շնորհելու Բորսայի անդամ չհանդիսացող ներդրումային ընկերության, բանկի կամ վարկային կազմակերպության կողմից ներկայացրած դիմումի մերժման համար:

94) Դիմումի բավարարման մասին Բորսայի գործադիր մարմնի ղեկավարի որոշումը առնվազն պետք է ներառի հետևյալ տեղեկությունները՝
   ա) թողարկողի անվանում,
   բ) արժեթղթերի դասը (տեսակը),
   գ) ժամկետայնությունը՝ պարտատոմսերի դեպքում,
   դ) տեղաբաշխման ենթակա արժեթղթերի քանակը, պարտատոմսերի դեպքում՝ ծավալը (անվանական արժեքով)
   ե) անվանական արժեքը
   զ) արժեթղթերի տեղաբաշխման աճուրդի եղանակը և ձևը,
   է) բացառման պայմանները՝ փակ աճուրդի դեպքումը) տեղաբաշխման ժամկետները
   ը) Բորսայի գործադիր մարմնի ղեկավարի որոշմամբ սահմանված այլ տեղեկություններ:

95) Դիմումի բավարարման կամ մերժման մասին որոշման ընդունման դեպքում Բորսայի գործադիր մարմնի ղեկավարը պարտավոր է այդ մասին տեղեկացնել թողարկողին կամ տեղաբաշխողին, ինչպես նաև առնվազն Բորսայի առևտրային համակարգի միջոցով՝ էլեկտրոնային եղանակով այդ մասին տեղեկացնել Բորսայի անդամներին:

Գլուխ 18. Մրցակցային և ոչ մրցակցային հայտերի ներկայացումը

96) Տեղաբաշխման համակարգում գրանցվելուց հետո տեղաբաշխման մասնակիցները տեղաբաշխման նստաշրջանի բացման պահից սույն կանոններին համապատասխան կարող են տեղաբաշխման համակարգ մուտքագրել՝
   ա) բաց ստանդարտ աճուրդի ընթացքում տեղաբաշխմանը թույլատրված արժեթղթերի գնման կամ վաճառքի հայտեր,
   բ) փակ և մեկ միասնական գնով բաց աճուրդների ընթացքում տեղաբաշխմանը թույլատրված արժեթղթերի գնման հայտեր:

97) Տեղաբաշխման նստաշրջանի ընթացքում որպես գնորդ հանդես եկող տեղաբաշխման ցանկացած մասնակից կարող է տեղաբաշխման համակարգ ներկայացնել արժեթղթերի գնման հետևյալ տեսակի հայտեր՝
   ա) ըստ գնման պայմանի՝ մրցակցային հայտ, իսկ փակ աճուրդի դեպքում նաև ոչ մրցակցային հայտ, ընդ որում, եթե տեղաբաշխողը փակ աճուրդի համապատասխան ձևի ընտրության ժամանակ իր դիմումում ընտրել է ոչ մրցակցային հայտի բացառման պայմանը, ապա փակ աճուրդի տվյալ ձևում չի կարող օգտագործվել գնման հայտի ոչ մրցակցային պայմանը,
   բ) ըստ բավարարման քանակական պայմանի՝ լրիվ կամ մասնակի բավարարմամբ հայտ, ընդ որում բաց աճուրդի բոլոր ձևերում, ինչպես նաև այն դեպքում, երբ տեղաբաշխողը փակ աճուրդի համապատասխան ձևի ընտրության ժամանակ իր դիմումում ընտրել է լրիվ բավարարմամբ հայտի բացառման պայմանը չի կարող օգտագործվել գնման հայտի լրիվ բավարարման պայմանը:

98) Բաց ստանդարտ աճուրդի ընթացքում որպես տեղաբաշխող հանդես եկող տեղաբաշխման ցանկացած մասնակից կարող է տեղաբաշխման համակարգ ներկայացնել արժեթղթերի վաճառքի հետևյալ տեսակի հայտեր՝
   ա) ըստ վաճառքի պայմանի՝ մրցակցային հայտ,
   բ) ըստ բավարարման քանակական պայմանի՝ լրիվ կամ մասնակի բավարարմամբ հայտ, ընդ որում բաց աճուրդի բոլոր տեսակներում չի կարող օգտագործվել լրիվ բավարարման պայմանը:

99) Բաց ստանդարտ աճուրդի ընթացքում տեղաբաշխման ցանկացած մասնակցի կողմից գնման կամ վաճառքի հայտերը տեղաբաշխման համակարգ կարող են մուտքագրվել տեղաբաշխման նստաշրջանի բացման պահից մինչև տվյալ նստաշրջանի փակման պահը:
100) Փակ և մեկ միասնական գնով բաց աճուրդների ընթացքում, որպես գնորդ հանդես եկող տեղաբաշխման յուրաքանչյուր մասնակցի կողմից գնման հայտերը տեղաբաշխման համակարգ ներկայացվում են գնման հայտերի ներկայացման համար սույն կանոններով սահմանված ժամանակահատվածում: Գնման հայտերի ներկայացման համար սույն կանոններով սահմանված ժամանակահատվածի ավարտից հետո, որպես գնորդ հանդես եկող տեղաբաշխման յուրաքանչյուր մասնակցի կողմից գնման հայտերի ներկայացումը տեղաբաշխման համակարգ անմիջապես դադարեցվում է:
101) Փակ և մեկ միասնական գնով բաց աճուրդների ընթացքում գնման հայտերի ներկայացման համար սահմանված ժամանակահատվածի ավարտից հետո, տեղաբաշխման համակարգում կատարվում է կտրման գնի ընտրություն, հաստատում և աճուրդի իրականացում:
102) Տեղաբաշխման նստաշրջանի ընթացքում տեղաբաշխման բացումը և փակումը, այդ թվում արժեթղթեր ձեռք բերելու նպատակով տեղաբաշխման համակարգ գնման հայտերի ներկայացման և կտրման գնի ընտրության, հաստատման և աճուրդի իրականացման ժամկետները, սահմանվում են սույն կանոնների 18) կետով սահմանված կարգով:
103) Բաց ստանդարտ աճուրդի ընթացքում տեղաբաշխման մասնակիցների կողմից տեղաբաշխման համակարգ ներկայացված գնման և վաճառքի հայտերն ընդգրկվում են երկու առանձին Հերթերում՝ ըստ գնային առաջնահերթության: Գնման հայտերը համապատասխան Հերթում դասակարգվում են ըստ գների նվազման, իսկ վաճառքի հայտերը՝ ըստ գների աճման: Նույն Հերթում մեկից ավելի հայտերում նշված գների հավասարության դեպքում այդ հայտերը Հերթում դասակարգվում են ըստ հայտերի ներկայացման ժամանակային առաջնահերթության:
104) Փակ և մեկ միասնական գնով բաց աճուրդների ընթացքում որպես գնորդ հանդես եկող տեղաբաշխման մասնակցի կողմից տեղաբաշման համակարգ ներկայացված գնման հայտերը ընդգրկվում են առանձին Հերթում՝ ըստ գնային առաջնահերթության: Գնման հայտերը համապատասխան Հերթում դասակարգվում են ըստ գների նվազման: Նույն Հերթում մեկից ավելի հայտերում նշված գների հավասարության դեպքում այդ հայտերը Հերթում դասակարգվում են ըստ հայտի ներկայացման ժամանակային առաջնահերթության:
105) Բաց ստանդարտ աճուրդի ընթացքում տեղաբաշխման ցանկացած մասնակից իրավունք ունի հանել Հերթում գտնվող՝ իր կողմից նախապես ներկայացված, սակայն դեռևս չբավարարված հայտերը, ինչպես նաև փոփոխել դրանցում նշված պայմանները:
106) Մեկ միասնական գնով բաց աճուրդի ընթացքում գնման հայտերի ներկայացումը տեղաբաշխման համակարգ իրականացվում է սույն կանոնների 107) կետում սահմանված կարգով:
107) Փակ աճուրդների ընթացքում մինչև գնման հայտերի ներկայացման համար սույն կանոններով սահմանված ժամանակահատվածի ավարտը որպես գնորդ հանդես եկող տեղաբաշխման ցանկացած մասնակից իրավունք ունի հանել Հերթում գտնվող՝ իր կողմից ներկայացված հայտերը, ինչպես նաև փոփոխել դրանցում նշված պայմանները:
108) Տեղաբաշխման համակարգում հայտերը ներկայացվում են Հայաստանի Հանրապետության դրամով (արտարժույթով արտահայտված կորպորատիվ պարտատոմսերի դեպքում՝ տվյալ արտարժույթով), բացառությամբ եկամտաբերությամբ փակ աճուրդի, որի դեպքում հայտերը ներկայցվում են տարեկան կամ արժեկտրոնային եկամտաբերությամբ՝ արտահայտված տոկոսով:
109) Որպես գնորդ հանդես եկող տեղաբաշխման ցանկացած մասնակցի կողմից ներկայացված մրցակցային հայտերում նշված արժեթղթերի ընդհանուր քանակի համար սահամանափակում չկա:
110) Բաց ստանդարտ աճուրդի ընթացքում տեղաբաշխման ցանկացած մասնակից կարող է տեսնել տեղաբաշխման համակարգ ներկայացված բոլոր հայտերը, բացահայտելով կամ չբացահայտելով հայտը ներկայացնողի առևտրային կոդը:
111) Փակ և մեկ միասնական գնով բաց աճուրդների ընթացքում տեղաբաշխողը կարող է տեսնել տեղաբաշխման համակարգ ներկայացված բոլոր գնման հայտերը, իսկ որպես գնորդ հանդես

եկող տեղաբաշխման մասնակիցը կարող է տեսնել միայն իր կողմից տեղաբաշխման համակարգ ներկայացված բոլոր գնման հայտերը:

112) Բաց ստանդարտ աճուրդի ընթացքում հայտում նշվում են դրա բավարարման հետևյալ էական պայմանները՝
   ա) արժեթղթի բորսայական հապավումը,
   բ) հայտի տեսակը (գնման կամ վաճառքի),
   գ) մեկ արժեթղթի գինը (բացառությամբ ոչ մրցակցային հայտի),
   դ) լոտերի քանակը,
   ե) հայտի տեսակը՝ ըստ գնային և քանակական պայմանների:

113) Փակ և մեկ միասնական գնով բաց աճուրդների ընթացքում գնման հայտում նշվում են դրա բավարարման հետևյալ էական պայմանները՝
   ա) արժեթղթի բորսայական հապավումը,
   բ) հայտի տեսակը (գնման),
   գ) մեկ արժեթղթի գինը (բացառությամբ ոչ մրցակցային հայտի, իսկ եկամտաբերությամբ փակ աճուրդի դեպքում՝ գնի փոխարեն հայտում նշվում է տարեկան եկամտաբերության տոկոսը),
   դ) հայտի ապահովման նպատակով տեղաբաշխման համակարգում արգելադրվող դրամական միջոցների գումարի չափը (ոչ մրցակցային հայտի դեպքում),
   ե) լոտերի քանակը,
   զ) հայտի տեսակը՝ ըստ գնային և քանակական պայմանների:

Գլուխ 19. Գործարքների կնքումը

114) Տեղաբաշխման ընթացքում գործարքը համարվում է կնքված տեղաբաշխման համակարգում դրա կնքման փաստի գրանցման պահից:

115) Տեղաբաշխման համակարգ տեղաբաշխման ցանկացած մասնակցի կողմից ներկայացված հայտերը ընտրվում և բավարարվում են՝
   ա) բաց աճուրդների ընթացքում՝ սույն կանոնների 5 - 8 գլուխներով սահմանված պայմաններին համապատասխան,
   բ) փակ աճուրդների ընթացքում՝ սույն կանոնների 9 - 15 գլուխներով սահմանված պայմաններին համապատասխան:

116) Տեղաբաշխման տվյալ նստաշրջանի ընթացքում չբավարարված հայտերը չեղյալ են համարվում և հաջորդ տեղաբաշխման նստաշրջանում չեն ընդգրկվում համապատասխան Հերթում:

117) Տեղաբաշխման տվյալ նստաշրջանի ընթացքում տեղաբաշխման համակարգի կամ դրան միանալու համար նախատեսված կապի միջոցների հետ կապված տեխնիկական խնդիրների առաջացման, դրանց վերացման, տեղաբաշխման նստաշրջանի հետաձգման և դրա պատճառով աճուրդը չկայացած ճանաչելու, ինչպես նաև այլ նմանատիպ իրավիճակների առաջացման դեպերում, դանք կարգավորվում են Բորսայի «Առևտրի ընդհանուր կանոններով»:

118) Տեղաբաշխման նստաշրջանի ավարտից 1 ժամվա ընթացքում Բորսայի իրավասու ստորաբաժանումը Բորսայի «Առևտրի ընդհանուր կանոններին» համապատասխան ձևակերպում է կնքված գործարքների գրանցման վկայականներ:

119) Գործարքների գրանցման վկայականի էլեկտրոնային օրինակն ուղարկվում է Բորսայի համապատասխան անդամի՝ ՍիԲիէյՆեթ համակարգչային ցանցի Լոտուս Դոմինո սերվերում գրանցված իրավասու էլեկտրոնային հասցեին, բացառությամբ սույն կանոնների 120) կետում նշված դեպքի: Գործարքնեե: գրանցման յուրաքանչյուր վկայականի էլեկտրոնային օրինակի հաղորդագրությունը պետք է պարտադիր օժտված լինի հաղորդագրության աե քումը և ստացումը հաստատող անդորրագրերը ստանալու հնարավորությամբ, պաշտպանված լինի էլեկտրոնային ստորագրությամբ և ծածկագրումով:

120) Այն դեպքում, երբ Բորսայի անդամը և/կամ տեղաբաշխողի մեկանգամյա կարգավիճակ ստացած Բորսայի անդամ չհանդիսացող ներդրումային ընկերությունը, բանկը կամ վարկային կազմակերպությունը միացված չէ ՍիԲիէյՆեթ համակարգչային ցանցին կամ ՍիԲիէյՆեթ համակարգչային ցանցով հաղորդագրության ուղարկումն անհնար է, գործարքի գրանցման

վկայականը պատրաստվում է թղթային կրիչով՝ երկու օրինակից, որի մեկ օրինակը ստորագրությամբ տրվում է գործարքի համապատասխան կողմին, իսկ երկրորդ օրինակը մնում է Բորսայում:

121) Գործարքի գրանցման վկայականի ձևը սահմանում է Բորսայի գործադիր մարմնի ղեկավարը:

122) Տեղաբաշխողն աճուրդի անցկացման ընթացքում չտեղաբաշխված արժեթղթերի տեղաբաշխումը կարող է իրականացնել սույն կանոններով սահմանված կարգով:

Գլուխ 20. Գործարքների կատարումը

123) Տեղաբաշխման (տեղաբաշխման նստաշրջանի) ավարտից հետո Բորսայի և Դեպոզիտարիայի միջև կնքված պայմանագրին համապատասխան Բորսան Դեպոզիտարիային է փոխանցում կնքված գործարքների վերաբերյալ տեղեկությունները, որոնց հիման վրա Դեպոզիտարիան իրականացնում է կնքված գործարքների վերջնահաշվարկը, բացառությամբ տեղաբաշխումը չկայացած կամ չեղյալ ճանաչելու դեպքերում, որի ժամանակ Դեպոզիտարիան վերջնահաշվարկ չի կատարում և իր կանոններով սահմանված կարգով իրականացնում է դեպոնացված միջոցների փոխանցում տեղաբաշխման մասնակիցներին:

124) Տեղաբաշխման ընթացքում կնքված գործարքների վերջնահաշվարկն իրականացվում է գործարքի կնքման օրվա ընթացքում:

125) Բորսայի անդամները, որոնց կազմում կամ անունից հանդես են գալիս գործարքի կողմ հանդիսացող տեղաբաշխման մասնակիցները պարտավոր են Բորսային վճարել Բորսայի «Սակագների մասին կանոններով» սահմանված համապատասխան միջնորդավճարները:

Գլուխ 21. Բաց կամ Փակ աճուրդի եղանակով կազմակերպվող տեղաբաշխման օրը տեղափոխելը, տեղաբաշխումը չկայացած կամ չեղյալ ճանաչելը

126) Փակ և մեկ միասնական գնով բաց աճուրդների եղանակով կազմակերպվող տեղաբաշխումը կարող է ճանաչվել չկայացած, եթե՝

ա) տեղաբաշխողը մինչև փակ և մեկ միասնական գնով բաց աճուրդների եղանակով կազմակերպվող տեղաբաշխման իրականացումը տվյալ աճուրդի նախնական արդյունքների ամփոփումից հետո հրաժարվում է ընտ ել կտրման գին, հաստատել և անցկացնել աճուրդը, ընդ որում, որպես աճուրդի անցկացման հրաժարման փաստ հիմք է հանդիսանում թողարկողի լիզորված ներկայցուցչի կողմից սույն ենթակետով սահմանված համապատասխան գործողություններ չկատարելը,

բ) տեղաբաշխողը մինչև փակ և մեկ միասնական գնով բաց աճուրդների եղանակով կազմակերպվող տեղաբաշխման իրականացումը տվյալ աճուրդի նախնական արդյունքների ամփոփումից հետո պարզի, որ թողարկողի կողմից ազդագրով կամ թողարկման որոշմամբ սահմանված տեղաբաշխման էական պայմանները չեն բավարարվում,

գ) փակ և մեկ միասնական գնով բաց աճուրդների եղանակով կազմակերպվող տեղաբաշխման անցկացման ամբողջ ժամանակահատվածում գնման մրցակցային որևէ հայտ չի ներկայացվել,

դ) տեղաբաշխման համակարգի կամ դրան միանալու համար նախատեսված կապի միջոցների հետ առաջացած տեխնիկական խնդիրների արդյունքում տեղաբաշխման նստաշրջանի բացման ժամը հետաձգվել է մեկ ժամից ավելի,

ե) բաց ստանդար աճուրդի եղանակով կազմակերպվող տեղաբաշխման նստաշրջանի ամբողջ ընթացքում գնման մրցակցային որևէ հայտով գործարք չի կնքվել:

127) Սույն կանոնների 126) կետով սահմանված դեպքերից որևէ մեկի առկայության դեպքում տեղաբաշխողը կարող է տեղափոխել տեղաբաշխման անցկացման օրը և սահմանել տեղաբաշխման անցկացման նոր օր համաձայնեցնելով այն Բորսայի գործադիր մարմնի ղեկավարի հետ: Բորսայի գործադիր մարմնի ղեկավարը պարտավոր է իր որոշմամբ սահմանել տեղաբաշխման անցկացման նոր օրը և այդ մասին առնվազն Բորսայի առևտրային համակարգի միջոցով՝ էլեկտրոնային եղանակով տեղեկացնել Բորսայի անդամներին:

128) Տեղաբաշխողի կողմից սույն գլխի 127) կետով սահմանված տեղաբաշխման անցկացման օրվա տեղափոխման և տեղաբաշխման անցկացման նոր օր սահմանելու կամ տեղաբաշխումը ընդհանրապես անցկացնելու հրաժարման դեպքում տեղաբաշխումը ճանաչվում է չեղյալ:

ԲԱԺԻՆ V. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Գլուխ 22. Կանոններում փոփոխությունները և լրացումները

129) Սույն կանոններում փոփոխություններն ու լրացումները դրա անբաժանելի մասն են և ուժի մեջ են մտնում օրենքով սահմանված կարգով, եթե այլ բան սահմանված չէ սույն կանոններով:

Հավելված 1

Արժեթղթի տեղաբաշխման դիմում

Սույնով _____ հայցում է
(թողարկողի կամ տեղաբաշխողի անվանումը)

ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ-ին իր կանոններին համապատասխան սպասարկել ստորև ներկայացվող արժեթղթի տեղաբաշխման գործընթացը:

1. Տեղեկություններ թողարկողի և րաբերյալ

1.1. Անվանումը

Լրիվ հայերեն անվանումը, հիմնադիր փաստաթղթերին համապատասխան (ե կայության դեպքում՝ նաև ռուսերեն և անգլերեն լեզուներով)	
Կրճատ հայերեն անվանումը, հիմնադիր փաստաթղթերին համապատասխան (առկայության դեպքում՝ նաև ռուսերեն և անգլերեն լեզուներով)	

1.2. Հասցեն և կապի միջոցները

Գտնվելու վայրը	
Փոստային հասցեն (գործունեության վայրը)	
Հեռախոս	
Ֆաքս	
Էլեկտրոնային փոստ	
Ինտերնետային կայքի հասցե	

1.3. Գրանցման տվյալները

Գրանցման երկիրը	
Գրանցման համարը և ամսաթիվը (օր/ամիս/տարի)	

1.4. Գործունեության լիցենզիա (առկայության դեպքում)

(նշել լիցենզիայի տեսակը, համարը և տրման ամսաթիվը, լիցենզիայի գործողության ժամկետը, ում կողմից է տրված և լիցենզիայով թույլատրված գործունեության տեսակները)

1.	
2.	
..	

1.5. Տեղեկություններ Թողարկողի ղեկավարների և պատասխանատու աշխատակիցների վերաբերյալ

(նշել տեղեկություններ թողարկողի գործադիր մարմնի ղեկավարի և տեղակալների (գործադիր մարմնի անդամների), գլխավոր հաշվապահի և Բորսայի հետ հարաբերությունների համար պատասխանատու (լիազորված) աշխատակիցների վերաբերյալ)

N	անունը, ազգանունը	թողարկողի կազմում զբաղեցրած պաշտոնը և այդ պաշտոնում աշխատանքի ընդունման ամսաթիվը	կապի միջոցները (հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստ)
1.			
2			
..			

2. Տեղեկություններ տեղաբաշխողի վերաբերյալ (առկայության դեպքում)

Լրիվ հայերեն անվանումը	
Փոստային հասցեն	
Կապի միջոցները	
Տեղաբաշխման կազմակերպման համար պատասխանատու աշխատակցի տվյալները (անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը և տվյալ պաշտոնում աշխատանքի ընդունման ամսաթիվը, կապի միջոցները)	

3. Ընդհանուր տեղեկություններ արժեթղթի վերաբերյալ

Արժեթղթի դասը (տեսակը)	
Արժեթղթի ձևը (փաստաթղթային կամ ոչ փաստաթղթային)	
Թողարկման որոշումն ընդունած մարմինը և որոշման ամսաթիվը (օր/ամիս/տարի)	
Թողարկման ծավալը (անվանական արժեքով)	
Թողարկված քանակը	
Մեկ արժեթղթի անվանական արժեքը	
Փոխարկելիությունը	
Շրջանառության ձևը	
Ապահովվածությունը	

Տեղաբաշխման սկիզբը (օր/ամիս/տարի)	
Տեղաբաշխման ավարտը (օր/ամիս/տարի)	
Երկրորդային շուկայում շրջանառության առաջին օրը (օր/ամիս/տարի)	
Ներդրողների նկատմամբ սահմանված սահմանափակումները	
Արժեթղթերի և դրանց թողարկման, տեղաբաշխման, շրջանառության և մարման այլ էական պայմանները	

4. Լրացուցիչ տեղեկություններ արժեթղթի վերաբերյալ (պարտատոմսերի համար)

Շրջանառության ժամկետը	
Վաղաժամկետ մարման հնարավորությունը	
Շրջանառության վերջին օրը (օր/ամիս/տարի)	
Մարման ամսաթիվը (օր/ամիս/տարի)	
Մարման (արժեկտրոնների վճարման) կարգը	
Մարման (արժեկտրոնների վճարման) վայրը	
Արժեկտրոնի եկամտաբերությունը	
Արժեկտրոնների վճարման պարբերականությունը	
Արժեկտրոնների վճարման ամսաթվերը (օր/ամիս/տարի)	
Արժեկտրոնների վճարման և պարտատոմսերի մարման համար դրանց սեփականատերերի ցուցակի կազմման (ռեեստրի փակման) տվյալները (օր/ամիս/տարի ժամ/րոպե)	

5. Արժեթղթի գին/եկամտաբերություն կապն արտահայտող բանաձևը (պարտատոմսի համար)

6. Արժեթղթերի տեղաբաշխման համար աճուրդի կիրառելի ձևը

բաց ստանդարտ աճուրդ ☐ անվանական ☐ սովորական ☐ մեկ միասնական գնով բաց աճուրդ՝ հաշվի առնելով գնման հայտերի գինը ☐ մեկ միասնական գնով բաց աճուրդ՝ հաշվի չառնելով գնման հայտերի գինը	☐ փակ ստանդարտ աճուրդ ☐ խառը փակ աճուրդ ☐ միջին կշռված գնով փակ աճուրդ ☐ մեկ միասնական գնով փակ աճուրդ՝ հաշվի առնելով հայտի գինը ☐ մեկ միասնական գնով փակ աճուրդ՝ հաշվի չառնելով հայտի գինը ☐ եկամտաբերությամբ փակ աճուրդ **Բացառել հետյալ պայմանները** ☐ ոչ մրցակցային հայտ

	☐ լրիվ բավարարմամբ հայտ

Գործադիր
մարմնի ղեկավար՝ _____ _____ _____
(պաշտոնը) (անուն, ազգանուն) (ստորագրություն)

Կ.Տ

« _____ » _____ _____թ.

Հավելված 2

ՆԱՍՂԱՔ ՕԵՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱՅԻ
Գործադիր մարմնի ղեկավարին

Տեղաբաշխողի կարգավիճակի հայցման դիմում

Սույնով հայցվում է _____-ին շնորհել
(ընկերության անվանումը)

_____,_____ տեղաբաշխողի կարգավիճակ:
և _____ ____ (ոակղ նաոմ) (արժեթղթերի դասը)

Գործադիր
մարմնի ղեկավար՝ _____ _____ _____
(պաշտոնը) (անուն, ազգանուն) (ստորագրություն)

Կ.Տ

« _____ » _____ _____թ.

Հավելված 3

լուսանկար (3x4 սմ)

Տեղեկություններ լիազորված ներկայացուցչի վերաբերյալ

Լիազորված ներկայացուցչի անունը, ազգանունը և հայրանունը		
Թողարկողի մոտ լիազորված ներկայացուցչի զբաղեցրած պաշտոնը		
Լիազորված ներկայացուցչի անձնագրի տվյալները (սերիան, համարը, երբ և ում կողմից է տրվել)		
Կապի միջոցներ	հեռախոս	
	ֆաքս	
	էլեկտրոնային փոստ	
	ՍիԲիէյՆեթ համակարգչային ցանցի էլեկտրոնային հասցե	
	այլ	

Գործադիր
մարմնի ղեկավար՝ _____ _____ _____
(պաշտոնը) (անուն, ազգանուն) (ստորագրություն)

Կ.Տ

« _____ » _____ _____թ.

Ե _____ _____

_____(իազորագրի տրման վայրը) (լիազորագրի տրման ամսաթիվը)

Սույն լիազորագրով _____

(թողարկողի անվանումը)

(այսուհետ՝ Թողարկող) իր աշխատակից_____-ին

(անուն, ազգանուն)

(անձնագիր՝ ___ _____, տրված «____» _____ _____թ.-ին ____-ի կողմից)

լիազորում է՝

1) ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ ԲԲԸ-ում (այսուհետ՝ Բորսա) կազմակերպվող _____ փակ աճուրդի եղանակով կազմակերպվող

Ե _____ ___ (րեղեիդս) տղբշմնընթացքում հանդես գալ որպես տեղաբաշխողի լիազորված ներկայացուցիչ՝ հետևյալ իրավունքներով՝

ա) կտրման գնի ընտրություն,

բ) կտրման գնի հաստատում,

գ) աճուրդի անցկացում:

2) ստանալու Բորսայի կողմից Տեղաբաշխողի լիազորված ներկայցուցչին տրամադրվող՝ տեղաբաշխման համակարգ մուտք գործելու ծածկագիրը և գաղտնաբառը,

3) տեղաբաշխմանը մասնակցելու Բորսայի տարածքում տեղադրված տերմինալի միջոցով,

ինչպես նաև կատարելու սույն լիազորության հետ կապված բոլոր անհրաժեշտ գործողությունները:

Սույն լիազորագիրը տրված է «_____» _____ _____թ.-ին և գործողության մեջ է մինչև

սույե _____ _____ժթթր եաախա վրը

Գրաի
ամիղկվար՝ _____ _____ _____

(պաշտոնը) (անուն, ազգանուն) (ստորագրություն)

Կ.Տ

« _____ » _____ _____թ.